



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ

ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 16- L

«05» օգոստոսի 2022

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 59-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածի  
1-ին մասերի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ


1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի դեկտեմբերի  
16-ի «Նախադպրոցական կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիրը» N 59-Լ  
հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211



Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2022 թվականի  
օգոստոսի 5-ի N 16-L հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի 2021 թվականի  
դեկտեմբերի 16-ի N 59-L հրամանի

**ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ  
ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՈՒՄԲ  
(2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐ)**

**Ծրագիրը հասցեագրված է նախադպրոցական ուսումնական  
հաստատությունների մանկավարժներին, սանի դաստիարակությամբ զբաղվող  
անձանց՝ աջակցելու 2-3 տարեկան սաների նախադպրոցական կրթության  
պետական կրթական չափորոշչով սահմանված կարողունակությունների  
ձևավորման, առօրյայի կազմակերպման, զարգացնող միջավայրի ստեղծման  
աշխատանքների կազմակերպմանը:**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

Կրտսեր առաջին խմբի 2-3 տարեկանների կրթական հիմնական ծրագիրը կազմված է ՀՀ Կառավարության կողմից հաստատված նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի պահանջների հիման վրա (13.05.2021թ. N 744–Ն որոշում)՝ այդ տարիքի սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ծրագրի բովանդակության յուրացումը կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների կողմից իրականացվում է նրանց համար կազմված ԱՌԻՉՊ-ով (անհատական ուսուցման և զարգացման պլան):

2-3 տարեկան սաների կրթական հիմնական ծրագիրը ներառում է Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի սահմանված զարգացման հետևյալ հիմնական բնագավառները(ուղղությունները)՝

1. Խոսքի, լեզվամտածողության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2-3 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի խոսքի զարգացման, լեզվամտածողության, ճանաչողական կարողությունների ձևավորման աշխատանքները՝ պարապմունքների, խաղային գործունեության և սաների առօրյայի կազմակերպման ընթացքում:

2. Հուզականային և սոցիալ-անձնային զարգացում.

2-3 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի զգայական դաստիարակությունը, հասակակիցների և մեծահասակների հետ շփումը և հուզական զարգացմանը նպաստող գործունեության ձևերը:

3. Շարժողական և ֆիզիկական զարգացում.

2-3 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սանի շարժողական ակտիվությունը ապահովող գործունեության ձևերը. մանր և խոշոր մկանները զարգացնող խաղերը, զբոսանքները, կոփման արարողությունները:

4. Աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

2-3 տարեկանների համար այս բնագավառը ներառում է շրջակա միջավայրի հետ ծանոթացումը, միջավայրում կողմնորոշումը, ինքնուրույնության, ինքնասպասարկման և անվտանգ կենսակերպի տարրական հմտությունների ձևավորումը գործունեության տարբեր ձևերում և առօրյայում:

5. Բարոյական, ազգային, Էկոլոգիական, իրավական, սեռային ինքնագիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ.

2-3 տարեկանների համար այս բնագավառը ներառում է սեփական ինքնուրույնը ճանաչելու, սեռային ինքնագիտակցության, գեղագիտական, բարոյական դաստիարակության տարրեր ապահովող գործունեության ձևերը:

Ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային, Էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները բխում են հասակարակության զարգացման պահանջներից: Դրանք համակցված իրագործվում են ծրագրային առանձին բաղադրիչներում և միտված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը:

Ծրագրային բովանդակությունը ապահովում 2-3 տարեկան սաների տարրական պատկերացումների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորումը՝ յուրաքանչյուր սանի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ :

Ծրագիրը սահմանում է տվյալ տարիքային խմբի (2-3 տարեկանների) ուսումնաստիարակչական գործընթացի բովանդակության կառուցվածքը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղությունները ներառող շաբաթական պարապմունքների քանակը, կանոնակարգային պահերը, շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, տարեվերջին սաներից ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ զարգացման ոլորտների:

2-3 տարեկանների կրթական հիմնական ծրագրին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

- համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին.
- կրթության աշխարհիկ բնույթը,
- երեխաների և մեծահասակների փոխգործունեության երեխայակենտրոն մոտեցման ապահովումը,
- ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը,
- նախադպրոցական կրթության բովանդակության մեջ սանի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, Էկոլոգիական նախագիտելիքներին ծանոթացման ներառումը:

### **ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ծրագրում ներկայացված են դաստիարակության և ուսուցման նպատակները, խնդիրներն ըստ ծրագրային բաղադրիչների, սաների առօրյայի կազմակերպման

առանձնահատկությունները, վերջնարդյունքների ապահովման հիմքերը՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հաշվառմամբ:

*Ծրագրի նպատակներն են՝*

➤ 2-3 տարեկան սաների տարիքային և անհատական առանձնահատկություններին համապատասխան հոգեկան ու ֆիզիկական ներդաշնակ զարգացման ապահովումը՝ ըստ ոլորտային վերջնարդյունքների.

➤ նախադպրոցական կրթության ավարտին սաներից ակնկալվող կարողունակությունների(գիտելիքներ, հմտություններ, համապատասխան վերաբերմունք և վարքագիծ) ձևավորմանն ուղղված աշխատանքների իրականացումը,

➤ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժներին աջակցումը:

Կրտսեր առաջին խմբի 2-3 տարեկանների կրթական հիմնական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով՝ սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի հաշվառմամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրերի բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

- 1) շարժողական ոլորտ (Հապավումը՝ Շ).
- 2) խոսքի և հաղորդակցական ոլորտ (Հապավումը՝ ԽՀ).
- 3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ (Հապավումը՝ ՀՍԱ).
- 4) իմացական ոլորտ (Հապավումը՝ Ի).
- 5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ (Հապավումը՝ ԻԱԱ) :

Կրտսեր 1-ին խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքն արտացոլվում է 5 ծրագրային բաղադրիչներում՝

1. Խոսքի զարգացում
2. Ինձ շրջապատող աշխարհը
3. Ֆիզկուլտուրա
4. Երաժշտություն
5. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք:

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է, դրանք սերտորեն փոխկապակցված են: Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր

բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում:

Ծրագրային բոլոր բաղադրիչներն ուղղված են ոլորտային վերջնարդյունքների ապահովմանը, որոնք էլ միտված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ նախադպրոցական տարիքի ավարտին:

Նախադպրոցական տարիքի ավարտին սանից ակնկալվող կարողունակություններն են՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն.
2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն.
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն.
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն.
5. թվային և մեդիա կարողունակություն.
6. մշակութային կարողունակություն.
7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն.
8. տնտեսական կարողունակություն.
9. ֆիզիկական կուլտուրայի կարողունակություն:

# ՍԱՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

## ԿՐՏՍԵՐ 1 ԽՈՒՄԲ

### (2-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆ)

#### **Շարժողական ոլորտ**

ա. սանը ինքնուրույն կամ մեծի օգնությամբ կարողանում է կատարել պարզ մարմնամարզական, աթլետիկական վարժություններ՝ փոփոխելով շարժման ուղղությունը, ելման դիրքը,

բ. կարողանում է կատարել ընդհանուր զարգացնող և հավասարակշռության պարզ վարժություններ,

գ. կարողանում է խաղալ՝ կիրառելով քայլք, վազք, ցատկեր, նետումներ, սողանցումներ,

տարածության մեջ կողմնորոշվելով շարժախաղեր՝ դրսևորելով անհրաժեշտ շարժողական ընդունակություններ,

դ. կարողանում է նստել, կանգնել, քայլել ջրի մեջ,

ե. մեծի ուղղորդմամբ պահպանում է մաքրության և օրվա ռեժիմի հիմնական պահանջները,

զ. ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է ինքնուրույնություն,

կարգապահություն, ընկերասիրություն.

զ. ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է ընկերասիրություն և համագործակցային կարողություններ:

#### **Խոսքի և հաղորդակցության ոլորտ**

ա. սանը խոսքային և ոչ խոսքային միջոցներով արտահայտում է իր մտքերը, կարծիքը, զգացողություններն ու պահանջները,

բ. պատասխանում է իրեն ուղղված պարզ հարցերին, միևնույն ժամանակ կազմում հարցեր «ո՞վ», «ի՞նչ» բառերով,

գ. մաքուր է արտաբերում առաջարկված պարզ բառերի հնչյունները.

դ. ընկալում է առարկաների խմբերն ընդհանրացնող բառերի իմաստը և դրանք կիրառում իր խոսքում,

ե. մաքուր է արտաբերում հայերենի հնչյունները

#### **Իմացական ոլորտ**

ա. սանը դասակարգում է առարկաներն ըստ կոնկրետ հատկանիշի,

բ. ուսումնասիրում է շրջապատող միջավայրը, փորձում է հարցերի միջոցով բավարարել

իր հետաքրքրությունները,

գ. ունի առարկաների մեծության, չափի, ձևի և քանակի մասին տարրական պատկերացումներ, ճանաչում է հիմնական գույները, երկրաչափական պարզ պատկերները,

դ. մեկ առարկան փոխարինում է այլ առարկաներով, հասկանում դրանց նշանակությունը,

ե. ունի տարրական պատկերացումներ իր և իր ընտանիքի մասին,

զ. առանձնացնում է իրեն մյուսներից, դրսևորում է համառություն ցանկություններում

և

գործողություններում.

### **Յուզական, սոցիալ-անձնային ոլորտ**

ա. սանը ճանաչում է հիմնական հույզերը, համարժեք արձագանքում է դիմացիկ հուզական դրսևորումներին,

բ. դրսևորում է իրավիճակին համապատասխան սոցիալական հույզեր՝ զարմանք, ուրախություն, տխրություն, ամաչկոտություն,

գ. շփվում է ծանոթ մեծահասակների հետ, նրանց խոսքին արձագանքում է հույզերով

և

պարզ խոսքային արտաբերումներով,

դ. մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում փորձում է

կառավարել

իր հույզերը և կատարել սոցիալական վարքի պարզ պահանջներն ու բարեկիրթ վարվեցողության կանոնները՝ մեծահասակների խնդրանքով կամ միջամտությամբ,

ե. հասակակիցների հետ շփվելիս դրսևորում է հուզական հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն,

զ. գիտի ծնողների և ընտանիքի անդամների անունները, ճանաչում է իրեն պատկանող

իրերն ու խաղալիքները.

### **Ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ**

ա. սանը դրսևորում է ինքնասպասարկման որոշ կարողություններ,

բ. մեծահասակի հսկողությամբ պահպանում է հիգիենայի կանոնները,

գ. մեծահասակի ուղղորդմամբ սկսում է հետևել անվտանգության տարրական կանոններին, լվանում է ձեռքերը, մաքրում է ատամները,

դ. մեծահասակների ուղղորդմամբ զգուշավորություն է ցուցաբերում՝ խուսափելով վտանգներից տարբեր իրադրություններում և վայրերում.



## ՍԱՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կանոնակարգն օրվա ընթացքում սաների տարաբնույթ գործունեության տեսակների՝ խաղ-պարապմունքների, դաստիարակչական աշխատանքների ու գործունեության ազատ ձևերի կազմակերպման, սաների ֆիզիկական, մտավոր աշխատանքների, հանգստի ճիշտ հերթագայման և ծանրաբեռնվածության ներդաշնակ բաշխման նախագծումն է: Կանոնակարգի ճիշտ կառուցվածքի հիմնական սկզբունքը դրա համապատասխանությունն է սաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններին, չբացառելով նաև անհատական մոտեցման սկզբունքը (քնի տևողություն, գործունեության տեմպ, նախասիրություններ, և այլն):

Ներկայացվում է օրվա կանոնակարգի օրինակելի տարբերակ՝ հնգօրյա աշխատանքային շաբաթով, 9 ժամյա տևողությամբ աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար: Առաջնորդվելով դրանով՝ յուրաքանչյուր հաստատություն պետք է կազմի իր պայմաններին և առանձնահատկություններին համապատասխան կանոնակարգ:

Ցանկայի է կանոնակարգային պահերի մեծ մասը կազմակերպել բակում:

### ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ (2-3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ) ԽՄԲԻ ՕՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

#### (9 – ժամյա՝ հնգօրյա աշխատանքային ռեժիմով)

N	Կանոնակարգայինն պահեր	Ժամերը տարվա ցուրտ եղանակին	Ժամերը տարվա տաք եղանակին
1	Սաների ընդունելություն, խաղեր, ինքնուրույն գործունեություն, առավոտյան մարմնամարզություն	8.30 -9.30	8.30 - 9.30
2.	Նախաճաշի նախապատրաստում, նախաճաշ	9.30- 10.00	9.30- 10.00
3.	Ինքնուրույն գործունեություն	10.00 - 10.15	10.00- 10.15
4.	Խաղ-պարապմունքի նախապատրաստում Խաղ-պարապմունքներ՝ ենթախմբերով Խաղ-պարապմունք առաջին	10.15- 10.30  10.30 - 10.45  10.45- 11.00	10.15- 10.30  10.30 -10.45  10.45- 11.00
	Խաղ- պարապմունք երկրորդ	11.00 -11.15  11.15 -11.30	

5.	Խաղեր, զբոսանքի նախապատրաստում, զբոսանք (խաղեր, դիտումներ, աշխատանք, ինքնուրույն գործունեություն)	11.30-12.00	11.00- 12.00  /կոփիչ միջոցառումներ բակում/
6.	Վերադարձ զբոսանքից, խաղեր	12.00- 12.10	12. 00- 12.10
7.	Ճաշի նախապատրաստում ,ճաշ	12.10-12.40	12.10 - 12.40
8.	Ինքնուրույն գործունեություն	12.40-12.50	12.40-12.50
9.	Ցերեկային քնի նախապատրաստում, քուն	12.50-14.50	12.50 -14.50
10.	Աստիճանական արթնացում	14.50-15.30	14.50-15.30
11.	Հետճաշիկի նախապատրաստում, հետճաշիկ	15.30-16.00	15.30-16.00
12.	Խաղեր,ինքնուրույն գործունեություն	16.00-16.30	16.00-16.30
13.	Չբոսանքի նախապատրաստում զբոսանք. տուն ճանապարհել	16.30 -17.30	16.30 -17.30

**ԿՐՏՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԵՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ  
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿ**

**(հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում)**

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է օգոստոսի 31-ին: Խաղ-պարապմունքներն անցկացվում են սեպտեմբերի 15-ից մինչև մայիսի 31-ը ներառյալ՝ 15ր տևողությամբ: Խաղ-պարապմունքների միջև ընկած ժամանակահատվածը 15 ր է:

Սեպտեմբերի առաջին երկու շաբաթը հարմարման փուլ է, ուստի հատուկ պարապմունքներ չեն անցկացվում:

Չորրորդ եռամսյակի համար նախատեսված չէ պարապմունքների բաշխման ցանկ: Ամռան ամիսներին անցկացվում են ուսուցանված նյութի կրկնությանն ու ամրապնդմանն ուղղված խաղ-պարապմունքներ:

Ամռան ամիսներին անցկացվում են կոփիչ միջոցառումներ:

Ծրագրային նյութի յուրացման համար հաշվետու ժամանակահատված է սահմանվում յուրաքանչյուր եռամսյակը:

Բաց թողնված ծրագրային ծավալը կարող է լրացվել չորրորդ եռամսյակում:

N	Պարապմունքների տեսակները	Պարապմունքների քանակը
1.	Խոսքի զարգացում	2 պարապմունք
2.	Ինձ շրջապատող աշխարհը	1 պարապմունք
3.	Նկարչություն	1 պարապմունք
4.	Ապլիկացիա/ կառուցողական աշխատանք	0,5պարապմունք 0,5 պարապմունք
5.	Ծեփակերտում	1 պարապմունք
6.	Ֆիզկուլտուրա	2 պարապմունք
7.	Երաժշտություն	2 պարապմունք
8.	Շաբաթական ընդամենը	10 պարապմունք

**Կրտսեր առաջին խմբում կազմակերպվող պարապմունքների քանակը՝ ըստ ամիսների  
և տարվա կտրվածքով.**

	Ըստ ամիսների	Տարվա կտրվածքով
1. Խոսքի զարգացում	8	72
2. Ինձ շրջապատող աշխարհը	4	36
3. Նկարչություն	4	36
4. Ապլիկացիա/կառուցողական աշխատանք	4	36
5. Ծեփակերտում	4	36
6. Ֆիզկուլտուրա	8	72
7. Երաժշտություն	8	72

**ԽՈՍՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ**

Այս տարիքային փուլը խոսքի զարգացման ակտիվ շրջան է: Սաները դրսևորում են բարձր զգայունակություն խոսքի հնչյունային և իմաստային կողմերի նկատմամբ: Որոշակիորեն քերականացվում է նրանց խոսքը, կարողանում են կազմել պարզ նախադասություններ, զարգանում է երկխոսելու կարողությունը: Երեք տարեկանում սաներն արդեն ընկալում են իրենց ծանոթ առարկաների նշանակությունը, որակներն ու հատկանիշներն արտահայտող բառերը: Նրանք սկսում են ներկայացնել փոքրիկ պատմություններ, առանձնացնել առարկաների և երևույթների հատկանիշներ ցույց տվող բառերը:

Աստիճանաբար սաները սկսում են նկատել կրկնվող երևույթների պատճառահետևանքային կապերը: Հետզհետե յուրացնելով բառի ընդհանրացված իմաստը՝ սանն աստիճանաբար սովորում է խմբավորել առարկաները, որոնք կարելի է անվանել նույն բառով, օրինակ՝ խաղալիք, կենդանի, միրգ և այլն: Ընկալելով մեծահասակի խոսքը՝ սանն ունենում է որոշակի պատկերացումներ շրջապատող միջավայրի վերաբերյալ ոչ միայն անմիջական, զննական ճանապարհով, այլև՝ բացատրությունների, հանձնարարությունների միջոցով: Այս տարիքում սաներն հետաքրքրությամբ են ունկնդրում պատմվածքները, հեքիաթները, կարողանում են օգտվել խոսքի մասերից, ինչպես՝ գոյականներից, այնպես էլ բայերից՝ փորձելով ճիշտ ներկայացնել ժամանակը: Խաղ-պարապմունքների ընթացքում և առօրյայում սանը կարողանում է սեփական մտքերն արտահայտելիս ընտրել համապատասխան բառեր: Կարևոր է սաներին սովորեցնել հուզական և խոսքային հաղորդակցման մեջ մտնել հասակակիցների և մեծահասակների հետ հետ:

### ***Ծրագրի «խոսքի զարգացում» ծրագրային բաղադրիչի նպատակներն են՝***

- Առաջացնել սեր մայրենի լեզվի նկատմամբ:
- Չարգացնել խոսքային լսողությունը, ճիշտ հնչարտաբերումը:
- Ձևավորել մեծահասակների և հասակակիցների հետ խոսքային հաղորդակցման պահանջմունք:
- Նպաստել դաստիարակի և հասակակիցների հետ անկաշկանդ շփմանը:

### ***Ծրագրի «խոսքի զարգացում» ծրագրային բաղադրիչի հիմնական խնդիրներն են՝***

- ***Նպաստել սանի բառապաշարի ձևավորմանն ու հարստացմանը:***

Բառապաշարի ձևավորումն ու հարստացումը բառերի քանակական կուտակման և դրանց սոցիալական կիրառելիության երկարատև գործընթաց է: Բառն ապահովում է շփման բովանդակությունը, իսկ բանավոր խոսքը հիմնվում է բառապաշարի տիրապետման վրա: Շրջակա միջավայրում սաների կողմնորոշման ունակության զարգացման հիման վրա անհրաժեշտ է ակտիվացնել բառապաշարը և նպաստել խոսքի ընկալմանը:

- ***Նպաստել սանի խոսքի հնչյունային կոլտուրայի դաստիարակմանը՝*** ուղղված մայրենի լեզվի հնչյունների յուրացմանը, որն իրականանում է մի քանի ուղղություններով՝

- ✓ խոսքային լսողության զարգացում,
- ✓ ճիշտ հնչարտաբերում,

✓ խոսքի արտահայտչականության ձևավորում:

- **Նպաստել խոսքի քերականական կառուցվածքի ձևավորմանը**՝ ուղղված խոսքում գոյականների ակտիվ կիրառմանը, պարզ, պարզ ընդարձակ նախադասություններ կազմելու կարողության ձևավորմանը, ինչպես նաև՝ հարցական բառերի օգտագործմանը:
- **Նպաստել սանի կապակցված խոսքի զարգացմանը, որի** հիմքում ընկած են հասակակիցների և մեծահասակների հետ խոսքային հաղորդակցման պահանջմունքի ձևավորումը և երկխոսության զարգացումը:

Այս տարիքային խմբում սանն ունի ոչ պակաս, քան 1000-1200 բառ ակտիվ բառապաշարում:

- **Ծանոթացնել գեղարվեստական գրականությանը:**

Գեղարվեստական գրականության նմուշներին ծանոթացումը նպաստում է սաների աշխարհաճանաչմանը: Լսելով, արտասանելով, պատմելով՝ սանը ծանոթանում է ստեղծագործության հերոսներին, փորձում զգալ դրա տրամադրությունը, տարբերակել լավն ու վատը: Ձևավորվում են բարոյականային մի շարք որակներ: Գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով անհրաժեշտ է սաների մեջ առաջացնել պատմությունը մինչև վերջ լսելու ցանկություն, հետաքրքրություն և խնամքով վերաբերմունք գրքի հանդեպ:

Առաջարկվում է գեղարվեստական ստեղծագործությունների հետևյալ ցանկը: Այն ուղեցույց է դաստիարակի համար և ենթակա է լրացման՝ ելնելով սաների զարգացման մակարդակից և իրականացվող միջոցառումների բովանդակությունից:

### **Սաներին պատմելու և ընթերցելու համար՝**

Հովհ. Թումանյան «Ուլիկը», ռուսական ժողովրդական հեքիաթ «Շաղգամը», Կ. Դ. Ուշինսկի «Համբերություն ունեցիր», Կ. Դ. Ուշինսկի «Գայլն ու այծիկները», Հոբոս Ապեր «Ծիածան», Լ. Ն. Տոլստոյ «Երեք արջի հեքիաթը», Վ. Սուտեև «Ո՞վ ասաց մյառ», Ս. Մարշակ «Հեքիաթ հիմար մկնիկի մասին», Կ. Դ. Ուշինսկի «Սագեր», Դ. Բիսեթ «Ղա-ղա-ղա» հեքիաթը, Գ. Մովսիսյան, «Մարթա փիսիկն ու անձեռոցիկները», ռուսական ժողովրդական հեքիաթ «Արջն ու Մաշան», Մ. Բուլատովի մշակմամբ, ռուսական ժողովրդական հեքիաթ «Գնդիկ բոբոնիկը», Գ. Մովսիսյան «Ո՞վ է մեզնից գեղեցիկ», Շ. Պերո «Կարմիր գլխարկը», Հ. Հովնաթան, «Ձնծաղիկ», Ա. Դարբնի «Սագը և ագռավը»:

**Ոտանավորի ընթերցանություն/ունկնդրում՝** Ս. Կապուտիկյան «Պարտեզ», Ա. Բարտո «Խաղալիքները» Պ. Խաչատրյան, «Զրում» Ս. Կապուտիկյան, «Լուսիկի կատուն», Զ. Զայրապետյան «Աշնան շուկա»

**Ոտանավորի ունկնդրում, արտահայտիչ արտասանություն՝** Դոկի. Թումանյան «Առաջին ձյունը» , Գ. Գեղունի «Ծիտիկը», Զ. Բաբաջանյան «Արան ու շիկը», Ս. Կապուտիկյան «Մաշան ճաշում է», Գ. Գեղունի «Ծափ, ծափ արա», Զ. Զայրապետյան «Տոնածառ», Զ. Վարդանյան «Օդաչու» , Ս. Կապուտիկյան «Արդեն մեծ եմ» , Զ. Բաբաջանյան «Գարուն», Ղ. Աղայան «Աղունակ», «Կաչաղակ»:

**Ձարգացնող խոսքային միջավայր.**

Խոսքի ակտիվացմանը նպաստում է մանկավարժական պահանջներին համապատասխան զարգացնող խոսքային միջավայրը՝ շփումը հասակակիցների և մեծահասակների հետ: Այն օժանդակում է սաների խոսքի՝ որպես հաղորդակցման միջոցի կատարելագործմանը: Անհրաժեշտ է մատչելի և հուզականորեն պատմել առարկաների, երևույթների ինչպես նաև՝ հետաքրքիր իրադարձությունների, իրավիճակների մասին: Կարևորվում է դիդակտիկ պարագաների առկայությունը՝ խաղալիքներ, նկարներ, նկարագարո գրքեր և այլն:

<b>Վերջնարդյունքներ (Չապավում՝ Խ2)</b>
<ul style="list-style-type: none"> <li>➤ ընկալի իրեն ուղղված բանավոր խոսքը և պատասխանի դրան</li> <li>➤ արտաբերի հայերենի հնչյունները</li> <li>➤ օգտագործի ածական, դերանուն, նախդիր</li> <li>➤ ճիշտ կիրառի գոյականի թիվը, բայի ներկա ժամանակաձև</li> <li>➤ ձևակերպի հարցական նախադասություններ «ով», «ինչ» բառերով,</li> <li>➤ ընկալի և կիրառի ընդհանրացնող բառեր,</li> <li>➤ օգտագործի պարզ նախադասություններ,</li> <li>➤ հաղորդակցվի ծանոթ մեծահասակների և հասակակիցների հետ՝ արտահայտելով միտքը, զգացողություններն ու պահանջմունքները խոսքային և ոչ խոսքային միջոցներով,</li> <li>➤ դրսևորի հետաքրքրություն գրքի, գրենական պիտույքների նկատմամբ,</li> <li>➤ հասկանա գրքի նշանակությունը,</li> <li>➤ հետևի խմբի կանոններին,</li> <li>➤ մասնակցի խաղերին և խաղային իրավիճակներին,</li> <li>➤ մասնակցի 10-15 րոպե տևողությամբ տարբեր աշխատանքներին,</li> </ul>

- մասնակցի նոր գործողությունների, խաղերի,
- մտապահի և վերարտադրի հատվածներ մանկական բանաստեղծություններից,
- ներկայացնի իր հետ տեղի ունեցած որոշ դեպքեր,
- մասնակցի մեծահասակի կազմակերպած խմբային խաղերին,
- հետևի խաղի կանոններին,
- մասնակցի այլ երեխաների խաղին,
- ուշադրություն դարձնի անվտանգության պահպանմանն ուղղված հրահանգներին:

### **Բովանդակություն**

Չեքիաթներ, պատմվածքներ, հանելուկներ, քառյակներ, ոտանավորներ:

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- ✚ Խաղեր
- ✚ Խաղ-պարապմունքներ (դիդակտիկ խաղ, հնչարտաբերման դիդակտիկ վարժություններ, հեքիաթի ունկնդրում, ոտանավորի ունկնդրում, գրույց),
- ✚ Ինքնուրույն գործունեություն,
- ✚ Աշխատանք կենտրոններում
- ✚ Էքսկուրսիաներ, զբոսանքներ
- ✚ Տոներ, միջոցառումներ
- ✚ Խաղ-բեմականացում, թատրոն

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝

Շ - (ե), (զ), ԽՉ - (ա) (բ), (գ), (դ), (ե), Ի - (ա), (բ), (դ), (ե) (զ), (գ), ՅՍԱ- (բ), (գ), (դ), (ե) (զ), ԻԱԱ - (ա) (բ), (գ), (դ)

## ԻՆՁ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ

Ծրագրի «Ինձ շրջապատող աշխարհը» բաղադրիչը նպատակուղղված է 2- 3 տարեկան սաների հոգեկան գործընթացների, ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը, սեփական անձի, շրջակա միջավայրի մասին տարրական պատկերացումների ձևավորմանը:

Ծրագրային այս բաղադրիչի խնդիրներն են՝

- ✓ ձևավորել պատկերացումներ սեփական անձի մասին, սովորեցնել անվանել ընտանիքի անդամներին և ամենամոտ հարազատներին,
- ✓ դաստիարակել սեր և հոգատարություն ընտանիքի անդամների, հարազատների և ընկերների նկատմամբ,
- ✓ ձևավորել պատկերացումներ անձնական հիգիենայի մասին,
- ✓ ձևավորել ինքնասպասարկման կարողություններ,
- ✓ ծանոթացնել հիմնական հույզերին,
- ✓ պատկերացում ձևավորել շրջակա միջավայրի մասին՝ ծանոթացնել նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակի և բակի տարածքին, սովորեցնել ճիշտ կողմնորոշվել նախադպրոցական ուսումնական հաստատության տարածքում,
- ✓ հաղորդել տեղեկություններ սաներին շրջապատող իրերի՝ խաղալիքների, կահույքի, սպասքի, երթևեկության որոշ կանոնների, տրանսպորտի տեսակների մասին,
- ✓ ձևավորել հիմնական գույները տարբերելու կարողություն,
- ✓ ձևավորել շրջապատող առարկաները համեմատելու կարողություն՝ ըստ ձևի, գույնի և չափի,
- ✓ ձևավորել որոշ ժամանակային և տարածական հասկացություններ կիրառելու կարողություն,
- ✓ ձևավորել տարրական պատկերացումներ կենդանական և բուսական աշխարհի որոշ ներկայացուցիչների, անկենդան բնության տարրերի մասին,
- ✓ սովորեցնել սաներին ըստ արտաքին տեսքի, համի տարբերել մրգերը և բանջարեղենը:
- ✓ դաստիարակել սեր և հոգատար վերաբերմունք կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ,
  - ✓ ձևավորել պատկերացումներ բնության մեջ տեղի ունեցող եղանակային փոփոխությունների մասին,
  - ✓ ձևավորել համապատասխան վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ:



## Վերջնարդյունքներ (Յապավում՝ ԻՇԱ)

- ✓ իմանա իր անունը, սեռը,
- ✓ անվանի իր մարմնի մասերը,
- ✓ ճանաչի և անվանի ընտանիքի անդամներին և ամենամոտ հարազատներին, տարբերի նրանց սեռը,
- ✓ ճանաչի հիգիենիկ պարագաները,
- ✓ կիրառի հիգիենիկ պարագաներ մեծահասակի օգնությամբ,
- ✓ հանվի և հազնվի մեծահասակի օգնությամբ,
- ✓ ճանաչի սպասքը,
- ✓ օգտվի սպասքի որոշ տեսակներից,
- ✓ ճանաչի հիմնական հույզերը,
- ✓ ճանաչի իրեն պատկանող իրերը,
- ✓ ճանաչի կահույքի որոշ տեսակներ,
- ✓ համեմատի առարկաները ըստ մեկ հատկանիշի,
- ✓ խմբավորի առարկաները,
- ✓ տարբերակի մեկ և շատ հասկացությունները,
- ✓ անվանի հիմնական գույները,
- ✓ կողնորոշվի նախադպրոցական ուսումնական հաստատության խմբասենյակում, բակում,
- ✓ օգտագործի ժամանակային մի քանի հասկացություններ,
- ✓ օգտագործի տարածական մի քանի հասկացություններ,
- ✓ տարբերակի և անվանի մի քանի մրգեր,
- ✓ տարբերակի և անվանի մի քանի բանջարեղեն,
- ✓ ճանաչի և տարբերակի որոշ ծառեր, ծաղիկներ,
- ✓ ճանաչի և անվանի որոշ ընտանի կենանիների,
- ✓ ճանաչի և անվանի որոշ վայրի կենդանիների,
- ✓ տարբերակի առանձին կենդանիների բնութագրիչ հատկանիշները՝ (նապաստակի ականջները երկար են, աղվեսը շեկլիկ է և ունի երկար, փամփոխ պոչ, և այլն):
- ✓ ճանաչի ընտանի թռչուններին/ արքաղաղ, հավ իր ճուտիկներով/,
- ✓ ցուցաբերի հոգատար վերաբերմունք կենդանիների, բույսերի նկատմամբ,
- ✓ ընկալի տարվա եղանակներին տեղի ունեցող բնության փոփոխությունները,

- ✓ ճանաչի և տարբերակի տրասպորտի որոշ տեսակներ,
- ✓ հետևի անվտանգության կանոններին,
- ✓ ուշադրություն դարձնի առողջության պահպանմանն ուղղված հրահանգներին,
- ✓ հետևի խաղի պարզ կանոններին,
- ✓ ցուցաբերի ինքնուրույնություն,
- ✓ մասնակցի տոներին,
- ✓ մասնակցի 10-15ր տևողությամբ տարբեր աշխատանքների

### Բովանդակություն

«Ես և իմ ընտանիքը»  
 «Մանկապարտեզում»  
 «Խաղալիքների աշխարհում»  
 «Ուրախ, տխուր և բարկացած մարդուկներ»  
 «Հագուստ»  
 «Սպասք»  
 «Կահույք»  
 «Կենդանիներ»  
 «Ծաղիկներ, ծառեր»  
 «Մրգեր»  
 «Բանջարեղեն»  
 «Թռչուններ»  
 «Գույների աշխարհում»  
 «Փողոց, լուսակիր» «Տրասպորտ»  
 «Տոներ»  
 «Բնության երևույթներ»

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- ✚ Խաղեր.
- ✚ Խաղ-պարապմունքներ.
- ✚ Չբոսանք.
- ✚ Աշխատանք կենտրոններում.
- ✚ Ինքնուրույն գործունեություն.
- ✚ Խաղ-բեմականացում, թատրոն.

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝  
 Շ-(գ) (ե), ԽՀ-( ա), (բ) , Ի -(բ), (ե), (գ) , ՀԱԱ- (ա, (բ), (գ), (դ), ԻԱԱ- (ա, (բ), (գ), (դ),

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անձի տարիքային զարգացման ոչ մի շրջանում ֆիզիկական դաստիարակությունը այնպես ցայտուն չի ներգործում առողջության, ֆիզիկական զարգացման, ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնման և սոցիալականացման վրա, ինչպես նախադպրոցական տարիքում:

Նախադպրոցականի ֆիզիկական կուլտուրան ոչ միայն մկանային վարժություն է, հիգիենիկ հմտությունների և առողջության ամրապնդում, այլև զգացմունքի, ուշադրության, կամքի, գեղեցկության արտահայտության, որը հանրագումարային ցույց է տալիս սանի բազմաբնույթ կուլտուրան:

Անկասկած դրանք այն հիմնական բաղադրիչներն են, որոնց վրա հենվելով իրականացվում է սանի բազմակողմանի դաստիարակությունը՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, Էկոլոգիական և այլն: Ֆիզիկական դաստիարակության բազմազան միջոցների արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ է կիրառել համակողմանի մոտեցում, կանոնավոր համագործակցել ծնողների հետ:

Նման հայեցակարգային դրույթները առաջադրում են նպատակաուղղված ամրապնդել երեխաների առողջությունը բարձրացնել ֆունկցիոնալ և ֆիզիկական պատրաստվածության մակարդակը:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում պետք է լուծվեն հետևյալ խնդիրները՝

- առողջության ամրապնդումը ու պահպանումը, օրգանիզմի կոփումը և դիմադրողականության բարձրացումը, հենաշարժողական ապարատի ամրապնդումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը և հարթաթաթության կանխարգելումը, ֆիզիկական ներդաշնակ զարգացումը, օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգի բարելավումը,
- կենսականորեն անհրաժեշտ շարժողական կարողությունների և հմտությունների /քայլք, ցատկ, սողանցում, մազցում, նետում/ ձևավորում ինչպես նաև դրանց տեխնիկայի ճիշտ կատարում,
- շարժողական ընդունակությունների /արագաշարժության, դիմացկունության, մկանային ուժի, ճարպկության, հավասարակշռության, կոորդինացիայի/ մշակում,
- շարժախաղերի և մարզախաղերի տարրերի ուսուցում, խաղային գործողությունների ձևավորում, զարգացում,
- շնչառական և մանր մոտորիկայի զարգացման վարժությունների ուսուցում,
- անձի բարոյականային դրական գծերի՝ ինքնուրունության, ակտիվության, ընկերասիրության, համագործակցության դաստիարակում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծումը պայմանավորված է սանի օրգանիզմի վրա տարբեր միջոցների միասնական ներգործությամբ, որոնց զուգակցումը կախված է նախադպրոցական ուսումնական հաստատության սաների առողջական վիճակից, ընտանեկան-կենցաղային պայմաններից, Էկոլոգիայի, սեռի, անհատական և տարիքային առանձնահատկություններից:

Ֆիզիկական դաստիարակության խնդիրների լուծման գործում Էական նշանակություն ունեն նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունում հիգիենիկ բարենպաստ պայմանների ստեղծումը, բավարար չափով բաց օդում լինելը և, ամենակարևորը, երեխաների նկատմամբ դրսևորվող բարեխիղճ վերաբերումքը, հոգատարությունն ու խնամքը:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրարականացվում են ռեժիմի, սննդի, կուլտուր-հիգիենիկ ունակությունների ու հմտությունների, ինչպես նաև կոփման միջոցառումների փոխկապակցությամբ:

Սաների ֆիզիկական դաստիարակության խնդիրներն իրականացվում են հիմնականում շարժողական նպատակային ռեժիմի պայմաններում, որի հիմքում ընկած են տարբեր ձևերով կազմակերպվող ֆիզկուլտուրային ամենօրյա միջոցառումները, սանի ազատ, ինքնուրույն շարժողական գործողությունը:

Սաների սովորում են վարքի կուլտուրա և այդ բոլորին պետք է տիրապետեն ու պարբերաբար կրկնեն, ամրապնդեն տարիքային հաջորդ խմբերում՝ որակական նոր կատարելությամբ:

Օրվա ընթացքում դաստիարակը կազմակերպում է խաղեր և վարժություններ տարբեր առարկաներով:

Ծրագրում տրված են նաև շարժողական ընդունակությունների մշակման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, հարթաթաթության կանխման և շնչառությունը կարգավորող վարժություններ, որոնք պետք է իրականացվեն մանկարապարտեզի ուսումնադաստիարակչական ամբողջ աշխատանքի ընթացքում:

Համաձայն ծրագրի՝ օրվա ընթացքում շարժողական ռեժիմը ապահովվում է մարմնամարզական վարժությունների և երաժշտառիթմիկ պարապմունքների միջոցով, ըստ որի առաջադրվող նյութը բովանդակվում է սպորտային վարժությունների պարզ ձևեր, նմանողական շարժումներ, ազգային պարային շարժումների տարրեր և այլն:

Շարժողական ընդունակությունների մշակման և շարժողական կարողությունների ու հմտությունների զարգացման համար վարժություններն ընտրվում են՝ հաշվի առնելով սաների անհատական և տարիքային հնարավորությունները, պարապմունքների և առօրյա աշխատանքների կազմակերպման համար մանկապարտեզում ստեղծված

պայմանները:

**Առավոտյան մարմնամարզություն** – ծրագրով նախատեսվում է ամեն օր, մինչև նախաճաշն անցկացնել առավոտյան մարմնամարզություն:

Ծրագրով առաջարկվում է ամեն օր կատարել առավոտյան մարմնամարզություն, որի համալիրները պետք է կառուցվի ծանոթ, պարզ, մատչելի, դինամիկ, ուշադրությունը կենտրոնացնող, համազարգացնող, նմանողական խաղային վարժություններից և պարային շարժումներից:

Տերեկային քնից հետո սաների արթնացնելու, օրգանիզմը թարմացնելու, ակտիվ գործունեության նախապատրաստելու նպատակով առաջարկվում է ամեն օր անցկացնել մարմնամարզական վարժություններ՝ երեխաների ծանոթ խաղ վարժություններից, պարային շարժումներից, որոնք զուգակցվում են օդալողակալով (տևողությունը՝ 10-15 րոպե):

Շարժողական ռեժիմում սաների ինքնուրույն շարժողական գործունեությանը մեծ տեղ է հատկացված: Սանն ազատ ընտրում է իր նախասիրություններին համապատասխանող գործունեություն, որտեղ զարգանում է նրա ստեղծագործական ակտիվությունը: Սանն ինքնահաստատման հնարավորություն է ձեռք բերում: Դառնալով իրերի, գործողությունների, հարաբերությունների տեր, նա ինքնաճանաչողության որակ է ձեռք բերում, մշակվում են հասակակիցների հետ համագործակցելու ունակություններ:

Սաների ինքնուրույն շարժողական գործունեությունը պայմանավորված է ակտիվությունը խթանող բազմազան պարագաների առկայությունը բակում և շենքի ներսում: Առաջարկվում է լայնորեն օգտագործել ծանոթ, ժողովրդական շարժախաղեր, մարզական տարրերով խաղեր ու սպորտային վարժություններ: Սաների ֆունկցիոնալ հնարավորություններն ընդլայնելու, շարժողական կարողությունները զարգացնելու նպատակով անհրաժեշտ է կիրառել պարզագույն արշավներ, հեռավոր զբոսանքներ օգտվելով բնական արգելքներից:

Ֆիզիկական դաստիարակության աշխատանքներն ամփոփելու նպատակով ծրագրով առաջարկվում է անցկացնել ժամանցներ, մարմնամարզական հանդեսներ, մարզական-մասսայական, առողջության օր, տասնօրյակներ:

Ծրագրային նյութը բարդանում է տարիքային մի խմբից մյուսին անցնելիս: Ընդ որում, կարևորվում է նոր շարժումների տեխնիկայի յուրացումը և մանկական օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության աստիճանական բարձրացումը: Տարիքային յուրաքանչյուր խմբի համար տրված ուսուցման միայն նոր նյութը: Յուրացված կարողությունների ամրապնդման ու կատարելագործման, մարզական ընդունակությունների և աշխատունակության բարձրացման համար նախատեսվում է սպորտային վարժությունների և խաղերի, խաղային վարժությունների պարբերական կրկնություն՝

տարիքային բոլոր հաջորդող խմբերում, որակական նոր բարձրությամբ:

Ծրագիրը իրականացնելիս անհրաժեշտ է կարևորել հետևյալ հանգամանքները.

1.Նպատակաուղղված մշակել շարժողական ընդունակությունները, որոնք էականորեն կնպաստեն հիմնական շարժողական գործողությունների արագ և տեխնիկապես ճիշտ տիրապետմանը:

2. Հնարավորինս հաճախ ֆիզկուլտուրային պարապմունքները անցկացնել բացօթյա:

3 Անհրաժեշտ է սովորեցնել սաներին գիտակցաբար հսկել սեփական շարժողական գործողությունների կատարման ընթացքը:

4.Համավարակի պայմաններում անհրաժեշտ է պահպանել շարժողական ռեժիմը, մշտապես հանձնարարել տնային առաջադրանքներ որում պետք է ընդգրկված լինեն շնչառական և ընդհանուր դիմացկունությունը մշակող վարժություններ:

5. առանձնահատուկ ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների հաղորդմանը և դրանց կիրառմանը գործնականում:

### 2-ից մինչև 3 տարեկան

#### Խնդիրները:

1. Ձևավորել տարածության մեջ կողմնորոշվելու, քայլելիս կայուն կեցվածք պահպանելուը կարողություն:
2. Ուսուցանել հիմնական շարժողական գործողություններ վազքերով, ցատկերով, նետումներով:
3. Ուսուցանել ընդհանուր զարգացնող վարժություններ շարվել խմբով միաշարք, ձեռք ձեռքի բռնած կազմել զույգեր:
4. Ուսուցանել շարժախաղեր հիմնական շարժողական գործողությունների կատարմամբ:

Աշխատանքի Ձևերը	Կազմակերպման առանձնահատկությունները
1. Ուսուցում պարապմունքների միջոցով՝ Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքներ	Շաբաթական 2 պարապմունք՝ մինչև 15 րոպե տևողությամբ
2. Ֆիզկուլտ-առողջարարական աշխատանքներ օրվա ընթացքում - Առավոտյան մարմնամարզություն - Շարժախաղեր և ֆիզիկական վարժություններ - Չբոսանքներ	Ամեն օր 4-5 րոպե տևողությամբ 10-15 րոպե
3. Երեխաների ինքնուրույն շարժողական	Ամեն օր բնույթը և տևողությունը

գործունեություն	պայմանավորված են երեխաների անհատական հնարավորություններով և նրանց պահանջներով: Այն անցկացվում է դաստիարակի հսկողությամբ:
-----------------	--

## **Հիմնական շարժումներով վարժություններ**

**Շարում և շարափոխում.** շրջանի կազմում եկթախմբերով և ամբողջ խմբով՝ դաստիարակի օգնությամբ: Շարում զույգերով: Միասյուն շարք՝ միմյանց հետևից:

**Քայլք.** դաստիարակի հետևից՝ հանձնարարված ուղղությամբ, փոխելով ուղղությունը, շրջանցելով առարկաները, զույգերով, շրջանով, միմյանց ձեռք բռնած: Կից քայլ առաջ և կողմ: Քայլքից անցնել վազքի և հակառակը:

**Վազք.** վազել դաստիարակի հետևից տարբեր ուղղություններով՝ առանց միմյանց հրելու: Վազել երկու գծերի միջով՝ առանց գծերը տրորելու (գծերի միջև տարածությունը 25-30սմ): Դանդաղ վազք 30-40 վրկ: Դանդաղ վազք 80 մ:

**Ցատկեր.** ցատկել զույգ ոտքով տեղում և առաջ շարժվելով: Ցատկել հատակին դրված պարանի վրայով: Հեռացատկ տեղից զույգ ոտքի հրումով: Ցատկեր 10-15 սմ բարձրությամբ առարկաների վրայով:

**Նետումներ.** գնդակների գլորում մեկ և երկու ձեռքով՝ կամարի տակով դաստիարակին: Գնդակի նետում առաջ զույգ ձեռքով՝ ցածից, կրծքի վրայից: Դաստիարակի նետած գնդակի (հեռավորությունը 0,5 մ) որսում 1-1,5 մ հեռավորությունից, գնդակի նետում երեխաների կրծքի բարձրությամբ ձգված ժապավենի վրայով: Առարկաների (գնդակ, ավազով պարկ, կոն, խորանարդիկներ և այլն) հավաքում և տեղափոխում, դասավորում որոշակի տեղում:

**Սողանցում և մագլցում.** սողանցում չորեքթաթ՝ 3-4 մ: Սողանցում 30-40 սմ բարձրությամբ արգելքի տակով: Մագլցելով անցնել գետնին դրված գերանի վրայով:

**Հավասարակշռություն.** քայլել 20 սմ լայնությամբ և 2-3 մ երկարությամբ «ուղիղ ճանապարհով», «զիզզազ ճանապարհով», շրջանում, տախտակի վրայով, մի ծայրը հատակից 15-20 սմ բարձրությամբ տեղադրված մարզանստարանի վրայով: Քայլեցնել 10-15 սմ բարձրությամբ արգելքի վրայով: Առանց ձեռքերի օգնության բարձրանալ նստարանին, կանգնել և իջնել: Դանդաղ պտտվել տեղում:

## **Ընդհանուր զարգացնող վարժություններ**

**Ձեռքերի և ուսագոտու համար.** ձեռքերը բարձրացնել առաջ, վեր, կողմ, ծալել և տարածել, ձեռքերը կրծքի առջև խաչածնել և տարածել կողմ, տանել մեջքի հետև: Ծափ առջևում և գլխավերևում:



**Ուտքերի համար.** քայլել տեղում, առաջ, կողմ և հետ: Ուտքը բարձրացնել վեր, իջացնել: Կքանստել՝ բռնելով հենարանից:

**Իրանի համար.** թեքվել աջ և ձախ՝ ձեռքերի ազատ թափահարումներով, առարկան փոխանցելով կողքի կանգնածին, նստածին: Թեքվել առաջ և կողմ: Մեջքին պառկած՝ միաժամանակ շարժել ուտքերը և ձեռքերը:

### **Շարժախաղեր**

**Քայքոյ և վազքոյ.** «Տիկնիկին հյուր գնալ», «Արահետով», «Ով ավելի կամաց», «Անցնել փայտի վրայով», «Հասեք ինձ», «Ճնճողուկները և ավտոմեքենան», «Գնացք», «Ինքնաթիռ», «Փուչիկ», «Արև և անձրև», «Բեր առարկան», «Թռչունները թռչում են»:

**Սողանցումով.** «Սողա մինչև չիսկչիկանը», «Դարպասիկներ», «Գիծը չտրորել», «Եղիր զգույշ», «Կապիկները»:

**Նետելով և բռնելով.** «Գնդակը շրջանում», «Բռնիր գնդակը», «Հարվածիր դարպասին», «Ճիշտ նշան բռնիր»:

**Ցատկով.** «Իմ ուրախ, հնչուն գնդակ», «Նստած է ճերմակ նապաստակը», «Թռչունները թռչում են», «Առվակի վրայով»:

**Տարածության մեջ կողմնորոշվելով.** «Որտեղ է գնդում», «Գտիր դրոշակը» «Ով սուլեց»:

**Չանազան շարժումներով և երգելով.** «Գնացք», «Փոքրիկ նապաստակ», «Դրոշակը»:

Մինչև 3 տարեկան երեխան կարողանում է կատարել մարմնամարզական աթլետիկական վարժություններ՝ փոխելով շարժման ուղղությունը և ելման դիրքը: Կարողանում է կատարել ընդհանուր զարգացնող վարժություններ, խաղալ շարժախաղեր, դրսևորում է անհրաժեշտ շարժողական ընդունակություններ, պահպանել հավասարակշռությունը, պահպանում է մաքրություն օրվա ռեժիմի պայմանները, նստել, կանգնել, քայլել ջրի մեջ: Դրսևորում է ինքնուրույնություն, կարգապահություն, ընկերասիրություն:

## Կոփում

Օրգանիզմի կոփումը երեխայի առողջությունը ամրապնդելու միջոցներից մեկն է: Կոփումը պետք է անցկացվի հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները նրա առողջական վիճակը: Կոփման կարևոր սկզբունքները պետք է հստակ պահպանեն դաստիարակները: Կոփումը պահանջում է աստիճանաբար մեծացնել գրգռիչ ներգործություն ունեցող ուժերը (ջերմաստիճանն իջեցնել, հագուստը թեթևացնել, մասնակի արարողություններից ընդհանուրին անցնել աստիճանաբար): Կոփումը պետք է անցկացնել կանոնավոր կերպով, հակառակ դեպքում՝ օրգանիզմում կազմավորվող պատասխան հակազդեցությունները անհետանում են:

Սաների մեջ պետք է գիտակցական վերաբերմունք դաստիարակել կիրառվող կոփող միջոցների հանդեպ, դաստիարակել կոփված լինելու ցանկություն:

Կոփվելու համար պետք է լայնորեն օգտվել թարմ, զով օդից: Աշնանը և ձմռանը 3-4 ժամից ոչ պակաս զբոսնեն ամեն տեսակ եղանակներին: Տարվա տաք եղանակներին որքան կարելի է շատ պետք է օգտվել արևի ճառագայթների օգտակար ներգործությունից, հերթականությամբ լինելով արևի տակ և սովերում:

Ամռանը յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատությունում պարտադիր կերպով անցկացվում է ընդհանուր ջրային արարողություն՝ ջրցան, իսկ ձմռանը՝ միայն որտեղ կան հարկ եղած պայմանները: Ջրցանը կարելի է փոխարինել ուրբերի ջրաշփումով:

Սանի առողջության համար մեծ նշանակություն ունեն հիգիենիկ պայմանների ստեղծումը և սանի օրգանիզմի պարբերական կոփումը: Կոփումն իր մեջ ներառում է միջոցառումների մի համալիր, որն ապահովում է օրգանիզմի ֆիզիկական զարգացումը, ֆիզիոլոգիական ֆունկցիաների ակտիվացումը, առողջության ամրապնդումը, օրգանիզմի դիմադրողականության բարձրացումը: Կոփված օրգանիզմը հեշտ է հարմարվում օդի ջերմաստիճանի և մթնոլորտային ճնշման տատանումներին, հիվանդությունների և վնասակար գործոնների նկատմամբ դառնում դիմացկուն: Կոփման միջոցների դրական ազդեցությունը կարելի է ապահովել հետևյալ կանոնների պահպանումով.

1. Կոփման արարողություններն սկսելուց առաջ խորհրդակցել բժշկի հետ:
2. Պահպանել արարողությունների կատարման պարբերականությունը, այսինքն, կոփումն անցակացնել անընդհատ:
3. Օրգանիզմը կոփող արարողություններին ընտելացնել աստիճանաբար:
4. Պահպանել անհատական մոտեցման սկզբունքը, բոլոր դեպքերում հաշվի առնել օրգանիզմի առանձնահատկությունները, հասակը, սեռը, առողջական վիճակը և այլն:

Կոփման լավագույն միջոցներն են՝ օդը, ջուրը, արևի ճառագայթները:

Կոփման միջոցներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել բնակլիմայական պայմանները և հիգիենիկ պահանջները:

### **Կոփման միջոցների տեղաբաշխումը ռեժիմում.**

1. Օդային լոգանք հիգիենիկ մարմնամարզության հետ՝ 10-15 րոպե, որից 6-7 րոպե և ավել է տրամադրել հիգիենիկ մարմնամարզությանը:
2. Ցերեկային քուն մաքուր օդում (15-30°C ջերմաստիճանում):
3. Չբոսանք օրը 2 անգամ (15-30 րոպե):
4. Լվացում՝ 14-16°C ջերմաստիճանի ջրով. նախ ավել է լվանալ պարանոցը, կրծքավանդակի վերին մասը, ապա ձեռքերը, մինչև ուսերը:
5. Ընդհանուր ջրցանում կամ ցնցուղ. նախ՝ 34°C, ապա աստիճանաբար ջերմաստիճանն իջեցնել ու հասցնել մինչև 24°C-ի:
6. Ուռքերի ջրցանում՝ նախ 28°C, ապա աստիճանաբար նվազեցնելով ջերմաստիճանը հասցնել 18°C-ի:
7. Լոգանք՝ շաբաթը երկու անգամ 36, ջրցողում՝ 34°C ջերմաստիճան ջրով:
8. Արևային լոգանք՝ նախ 5-6 ավա աստիճանաբար տևողությունն ավելացնելով, հասցնել մինչև 10-15 րոպեի, օրը երկու անգամ:

Տարվա տաք եղանակներին օդային կոփումն ապահովվում է առավելագույն չափով՝ բաց օդում լինելով, կազմակերպված խաղերի և աշխատանքային գործունեության պայմաններում, եղանակին համապատասխան հագուստով և կոշիկներով, ցերեկային քունը կազմակերպելով մաքուր օդում կամ բաց պատուհաններով ննջարաններում:

Ձմռանը սաները ավել է լինեն լավ օդափոխված շենքում (խմբասենյակում), 19-20 °C ջերմաստիճանի տաքության պայմաններում՝ թեթև հագուստով: Ցերեկային քունը ավել է կազմակերպել հնարավորության դեպքում դրսում, կամ ննջարանում թարմ օդի պայմանով (ջերմաստիճանը +14, 16°C).

Ֆիզիկական վարժությունները անցկացվում են բաց օդանցքների պայմաններում, օդի +15, 16°C ջերմաստիճանի առկայությամբ: Չբոսանքները ավել է կազմակերպվեն ռացիոնալ, բավարար տևողությամբ: Բոլոր եղանակներին բաց օդում լինելն անհրաժեշտություն է:

Ձմռանը ընդհանուր ջրցանը և ջրային լոգանքներն անցկացվում են այն դեպքում, երբ նախադպրոցական ուսումնական հաստատությունում կան համապատասխան պայմաններ: Ջրային լոգանքներն անցկացվում են այն դեպքում, երբ արտաքին միջավայրի ջերմաստիճանը 21 °C-ից ցածր չէ:

Օրգանիզմը կոփելու համար անշուշտ կարևոր է իմանալ հագուստի ընտրությունը: Այն պետք է համապատասխանի տարվա եղանակին և օրվա ջերմաստիճանին, լինի թեթև օդաթափանցից և ազատ շարժումների համար:

Կոփման լավագույն միջոց է նաև ոտաբոբիկ քայլել տաք ավազի վրա, այստեղ ուշադրություն պետք է դարձնել ավազի մաքրությանը և անվտանգության ապահովությանը (կտրող, ծակող իրերի բացակայություն):

**ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ**  
**2-3 տարեկանների համար**

<b>Գույքի անվանումը</b>	<b>Քանակ</b>
1. Մումլար, ուղի (200 . 35 սմ)	1 հատ
2. Սայլակներ, կառքեր	5 հատ
3. Ճոճանակներ–սանդուղքներ	3 հատ
4. Չամբյուղներ՝ առարկաների նետման համար	2 հատ
5. Չամբյուղ՝ գնդակների պահպանման համար	2 հատ
6. Կարճ ժապավեններ տարբեր գույնի (երկարությունը՝ 50 -60 սմ)՝	50 հատ
7. Ավազով լցված պարկեր (քաշը՝ 400 գ)	2 հատ
8. Ավազով լցված պարկեր (քաշը 150 — 200 գ)	8 հատ
9. Ռետինե գնդակներ (տրամագիծը 6-8 սմ)	10 հատ
10. Ռետինե գնդակներ ( տրամագիծը՝ 20 — 25 սմ )	25 հատ
11. Հողմադացներ- պտուտաններ	10 հատ
12. Մարմամարզական փայտիկներ (երկարությունը՝ 75 — 80 սմ)	10 հատ
13. Օղակներ (տրամագիծը՝ 55 — 65 սմ)	5 հատ
14. Օղակներ (տրամագիծը 40 սմ)	2 հատ
15. Դրոշակներ	30 հատ
16. Կարճ հյուսված քուղ (երկ.՝ 75 սմ)	30 հատ
17. Քուղ (երկարությունը 15-20սմ)	1 հատ

**Վերջնարդյունքներ (Չապավում՝ \$)**

- կատարում է մարմնամարզական պարզ վարժություններ,
- փոխում է դիրքը, ելման դրությունը,
- կատարում է զարգացնող վարժություններ,
- կատարում է հավասարակշռության վարժություններ:
- խաղային գործունեության ընթացքում և առօրյայում կիրառում է հիմնական շարժումներ /քայլք, վազք, ցատկ, մագլցում, սողանցում, նետում/
- կարողանում է ազատ շարժվել ջրում,
- հետևելով մեծահասակի հրահանգին պահպանում է մաքրություն,
- պահպանում է ռեժիմային պահերին ներկայացվող պահանջները,
- ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է ինքնուրույնություն,
- ֆիզիկական դաստիարակության տարբեր ձևերում դրսևորում է կարգապահություն:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝  
 Շ (ա),(բ), (գ), (ե),(զ), ԽՅ (ա),(բ), Ի (ա), (զ), ՅՍԱ (ա),(բ), (գ), (բ), (ե), ԻԱԱ -( բ), ( գ):

## **ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**

Երաժշտությունը առանձնահատուկ տեղ է գրավում նախադպրոցական տարիքի սաների գեղարվեստագեղագիտական դաստիարակության գործում: Այն սաների հոգու հայելին է, նրանց հույզերի, զգացմունքների արձագանքը: Իսկ զգացմունքը երաժշտության հիմնական բովանդակությունն է, երեխաների սաների հուզական ոլորտը ձևավորելու արդյունավետ միջոցներից մեկը:

Ծրագրային այս բաղադրիչի նպատակն է՝

- սաների մեջ հետաքրքրություն սերմանել երաժշտության նկատմամբ,
- ձևավորել երաժշտական գործունեության վերաբերյալ տարրական նախագիտելիքներ,
- զարգացնել նրանց երաժշտական ունակությունները,
- ընդլայնել սաների մտահորիզոնը,

Երաժշտական ստեղծագործությունների զգացմունքային ընկալման շնորհիվ սանը բացահայտում է իրեն շրջապատող աշխարհը, տարբերում է չարն ու բարին, տեսնում գեղեցիկը: Երաժշտությունը արտացոլվում է սանի զարգացման բոլոր ոլորտներում և կարևոր նշանակություն ունի նրա մտավոր, անձնային և գեղագիտական զարգացման գործում: Երաժշտության հմայքը, հուզականությունը, ելևէջները այնպիսին են, որ հնարավորություն են ընձեռում համադրելու ծրագրում տեղ գտած բոլոր պարապմունքների հետ:

### **Խնդիրները՝**

#### **Ունկնդրում**

- ցանկություն առաջացնել հետաքրքրությամբ ունկնդրելու երաժշտությունը,
- սովորեցնել երեխաներին ուշադիր ունկնդրել հանգիստ և ուրախ երգեր, տարբեր բնույթի ստեղծագործություններ,
- ձևավորել երաժշտությունը հուզականորեն ընկալելու կարողություն,
- ձևավորել երաժշտական հնչյունները ըստ բարձրության տարբերակելու ունակություն,
- ձևավորել երաժշտության բնույթը որոշելու, ռիթմը, տեմպը, հնչերանգը ընկալելու ունակություն,
- ձևավորել ունկնդրած կամ սովորած ստեղծագործությունը հիշելու և ճանաչելու ունակություն:

#### **Ձայնավարժություն, երգեցողություն**

- սովորեցնել հասկանալ, թե ինչի (ուժ) մասին է երգը,
- զգացմունքային արձագանքել երաժշտության բովանդակությանը,
- զարգացնել մեծի հետ միասին երգելու ունակությունը,

- ձևավորել պարզ մեղեդիով և քիչ բառերով երգեր երգելու կարողություն:

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- Սովորեցնել երեխաներին սկսել շարժվել երաժշտության հետ, և ժամանակին ավարտել:
- Շարժման միջոցով զարգացնել երաժշտությունը հուզականորեն ընկալելու կարողություն:
- Բարելավել քայլելու, վազելու ունակությունը:

### **Պար**

- Չարգացնել երաժշտության դաստիարակի ցուցադրած շարժումները ընկալելու և վերարտադրելու ունակությունը,
- սովորեցնել կատարել պարային պարզագույն շարժումներ՝ ծափ տալ, ոտքով դոփել, ձեռքերով պտույտներ կատարել, քայլել շրջանագծով, ձեռքերը բռնած կազմել շրջան՝ մեծացնելով և փոքրացնելով այն, ցրված քայլել,
- սովորեցնել փոխել շարժումները երաժշտության բնույթին համապատասխան:

### **Խաղ**

- Ձևավորել կենդանիներին, հեքիաթի հերոսներին բնորոշ շարժումներ անելու, նրանց ձայնը նմանակելու ունակություն (թռչունը ծվլալով թռչում է, նապաստակը թռչկոտում է, արջը մռնչալով քայլում է):

### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

- Ծանոթացնել բնական և մանկական նվագարաններին,
- սովորեցնել նրանց անվանումները,
- ձևավորել բնական, մանկական նվագարանները ճանաչելու, անվանելու և նրանց հնչերանգը տարբերակելու ունակություն:

### **Չորինում (իմպրովիզացիա)**

- Չարգացնել երեխաների երևակայությունը և ինքնուրույն ստեղծագործելու կարողությունը:

### **Մատների մարզանք**

- Երաժշտության ներքո ամրացնել երեխաների ափերի և մատների մկանները՝ նպաստելով նվագելու, նկարելու, պարելու և այլ կարողունակությունների զարգացմանը:

### **Երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)**

- Երաժշտության ներքո, պարագաներով կամ առանց պարագաների, ռիթմիկ շարժումների միջոցով զարգացնել երեխաների ռիթմն ու լսողությունը, ուշադրության կենտրոնացումը, հիշողությունը, ճարպկությունը:

### **Երաժշտական թերապիա**



- Նպաստել երեխաների առողջական համակարգի խթանմանը, լարվածության վերացմանը՝ երաժշտության ներքո:

### **ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ**

- «Շվի» ժողովրդական
- «Լորիկ» ժողովրդական, մշակույթը՝ Կոմիտասի
- «Կարոսել» խոսք՝ Նանսեն Միքայելյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Գնացք» երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Քայլերգ» խոսք՝ Շուշանիկ Բրուստյանի, երաժշտ.՝ Արեգ Լուսինյանի
- «Էծիկ» խոսք՝ Հակոբ Աղաբաբի, երաժշտ.՝ Դ. Ղազարյանի
- «Ուրախ» պար երաժշտ.՝ Ա.Մանուկյանի
- «Անուշ տատիկ» խոսք և երաժշտ.՝ Անահիտ Մովսիսյանի
- «Բոլորը քնեցին» խոսք և երաժշտություն՝ Անահիտ Մովսիսյանի
- «Արջի վիշտը» խոսք.՝ ժող. երաժշտ.՝ Ռոմանոս Մելիքյանի
- «Արջուկ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի
- «Նապաստակի երգը» խոսք՝ Լաուրա Պողոսյանի, երաժշտ.՝ Նարինե Սահակյանի
- «Արդեն մեծ եմ» խոսք.՝ Սիլվա Կապուտիկյանի, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Վախկոտ կատուն» ժողովրդական
- «Արև արև» ժողովրդական
- «Գարուն է եկել» խոսք՝ Երվանդ Պետրոսյանի, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Ծիտիկը» խոսք և երաժշտ.՝ Սվետլանա Սարուխանյանի
- «Սիրուն աշուն» խոսք և երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Ձմեռ պապի» խոսք՝ Խնկո Ապոր, երաժշտ.՝ Հռիփսիմե Խրիմյանի
- «Սկյուռիկ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի
- «Նապաստակ» խոսք՝ Սուրեն Մուրադյանի, երաժշտ.՝ Լիլիա Չալիսյանի
- «Հոյ նար» ժողովրդական
- «Ուրախ ձկնիկ» խոսք և երաժշտ.՝ Անահիտ Մովսիսյանի
- «Արջերը պարում են» երաժշտ.՝ Է. Փաշինյանի

Երգերը կարող են բեմականացվել:

Նվագ բնական, մանկական նվագարաններով

Նվագարաններով կամ ծափերով վերարտադրել սովորած երգերի ռիթմական պատկերը:

Մատների մարզանք, երաժշտական թերապիա բաժինների երաժշտությունը ընտրում է երաժշտության դաստիարակը՝ հաշվի առնելով սաների նախասիրությունները:

## **Վերջնարդյունքներ (Չապավում՝ Ե)**

### **Ունկնդրում**

- հուզականորեն ընկալի երաժշտությունը,
- տարբերակի երաժշտական հնչյունները ըստ բարձրության,
- որոշի երաժշտության բնույթը,
- ընկալի երաժշտության ռիթմը,
- ընկալի երաժշտության տեմպը,
- ընկալի երաժշտության հնչերանգը,
- հիշի ունկնդրած կամ սովորած ստեղծագործությունները,
- ճանաչի ծանոթ ստեղծագործությունները:

### **Ձայնավարժություն, երգեցողություն**

- հասկանա ինչի (ուճ) մասին է երգը,
- զգացմունքային արձագանքի երաժշտության բովանդակությանը,
- երգի մեծի հետ միասին:

### **Երաժշտաշարժական վարժություններ**

- շարժվի երաժշտության սկիզբն ու ավարտը զգալով,
- քայլի, վազի երաժշտության ներքո,
- շարժման միջոցով հուզականորեն ընկալի երաժշտությունը:

### **Պար**

- ընկալի երաժշտության դաստիարակի ցուցադրած շարժումները,
- հիշի ցուցադրած շարժումները,
- վերարտադրի շարժումները,
- կատարի պարային պարզագույն շարժումներ,
- ծափ տա,
- ոտքերով դոփի,
- դաստակներով պտույտներ կատարի,
- քայլի շրջանագծով, ձեռքերը բռնած կազմի շրջան՝ մեծացնելով և փոքրացնելով այն,
- քայլի ցրված,
- փոփի շարժումները երաժշտության բնույթին համապատասխան:

### **Խաղ**

- Նմանակի կենդանիներին, թռչուններին, հեքիաթի հերոսներին բնորոշ շարժումները՝ երաժշտության ներքո, նմանակի կենդանիներին, թռչուններին բնորոշ ձայները:

### **Նվագ բնական, մանկական նվագարաններով**

- Ճանաչի բնական, մանկական նվագարանները,

- անվանի բնական, մանկական նվագարանները,
- տարբերակի բնական, մանկական նվագարանների հնչերանգները:

### **Յորինում (իմպրովիզացիա)**

#### **Երաժշտական թերապիա**

- Աչքերը փակ կամ օրորվելով ունկնդրի մեղմ երաժշտություն,
- երաժշտության ներքո լսի բնության ձայները՝ թռչունների ծվլոց, առվակի քչքոց, մեղուների բզզոց և այլն՝ կատարելով համապատասխան շարժումներ:

#### **Բովանդակություն՝**

**Ունկնդրում** - ուրախ, տխուր ինտոնացիաներ, հակադիր երաժշտության փոփոխություն, երաժշտական հնչյուններ, ռիթմ, ռեգիստր, տեմպ, ուժգնություն, հնչերանգ, մեղեդի:

**Երգեցողություն** - ճիշտ շնչառություն, կեցվածք, հնչեղ ձայն, երգի բառերի հստակ արտասանություն, մեղեդու ճիշտ վերարտադրում, կենդանիների ձայների նմանակում:

**Երաժշտաշարժական վարժություններ** - երաժշտառիթմիկ գործունեության հմտություններ, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ քայլք, վազք:

**Պար** - քայլքի տեսակներ, ցրված քայլք, շրջանի կազմում, քայլք շրջանով՝ մեծացնելով և փոքրացնելով այն, պարային պարզ շարժումներ՝ պարագաներով և առանց պարագաների, թռիչքներ, պտույտներ՝ մենակ, զույգերով, խմբով, դաստակների պտույտներ, ծափեր, դոփեր:

**Խաղ** - երաժշտական դիդակտիկ խաղերգեր, հեքիաթի հերոսների շարժումների, ձայնարկումների նմանակում երաժշտության ներքո:

**Նվագ բնական, մանկական նվագարաններով**- բնական, մանկական նվագարաններ, դրանց անվանումները, հնչերանգները:

**Հորինում** (հմպրովիզացիա) - երաժշտառիթմիկ պատկերների, պարզ մեղեդու, պարային շարժումների, երաժշտական խաղի հորինում

**Մատների մարզանք** - մատների մարզանք երաժշտության բնույթին, տեմպին, ռիթմին համապատասխան

**Ռիթմիկ զգացողության զարգացում** - երգել պարելով, պարել նվագելով, երգել նվագելով:

**Երաժշտական թերապիա** - առողջական համակարգի խթանում, լարվածության վերացում:

Գործունեության ձևեր՝

- Խաղ-պարապմունք՝
  - ✓ ունկնդրում,
  - ✓ ձայնավարժություն, երգեցողություն,
  - ✓ երաժշտաշարժական վարժություններ,
  - ✓ պար,
  - ✓ խաղ,
  - ✓ նվագ մանկական նվագարաններով,
  - ✓ հորինում (հմպրովիզացիա)
  - ✓ մատների մարզանք
  - ✓ երաժշտառիթմիկա (ռիթմիկ զգացողության զարգացում)
  - ✓ երաժշտական թերապիա
- Տոն և զվարճալիք.
- Չբոսանք.
- Երաժշտությունը առօրյայում

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշի հետ՝

Շ-ժգ,Է, ԽՀ-բ,գ,զ,ժ, Ի-ա,բ,գ,դ, ՀՍԱ-ա,բ,գ,դ,ե,զ,Է,թ, ԻԱԱ-ա,բ,գ,դ,Է

## ԿԵՐԱՊԱՐՎԵՍԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Կերպարվեստ և կառուցողական աշխատանք» ծրագրային բաղադրիչը նպատակաուղղված է կրտսեր 1-ին խմբում ձևավորելու սաների առաջին զգայական ընկալումները գեղեցիկի նկատմամբ, զարգացնելու լսելու, տեսնելու և դիտելու ունակությունները, հետաքրքրությունն առաջացնելու կերպարվեստի տեսակների՝ նկարչություն, ծեփ, ապլիկացիայի և կառուցողական աշխատանքի նկատմամբ:

### ***Ծրագրային այս բաղադրիչի խնդիրներն են՝***

- Խթանել հետաքրքրությունը կերպարվեստային՝ տեսակների նկատմամբ:
- Ծանոթացնել նկարչական նյութերին, ձևավորել մատիտի, վրձնի, ջրաներկի հետ աշխատելու հմտություններ:
- Ծանոթացնել ծեփակերտման նյութերին:
- Ծանոթացնել ապլիկացիայի և կառուցողական աշխատանքի հիմնական նյութերին:
- Ծանոթացնել երեք հիմնական գույներին:
- Ձևավորել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ:
- Նկարելիս բացահայտել առարկաների հարաբերությունները միմյանց նկատմամբ /հեռու- մոտ, բարձր-ցածր/:
- Չարգացնել զգայական ընկալումը: Սովորեցնել զգալ, դիտել, տեսնել շրջապատող միջավայրը:
- Ձևավորել երևույթների և առարկաների նկատմամբ հուզական-զգայական վերաբերմունք:
- Չարգացնել պատկերացումներ առարկաներին բնորոշ հատկությունների՝ ձևի, չափի, գույնի նկատմամբ.

## Վերջնարդյունքներ (Չապավում՝ ԿԿԱ)

### Նկարչություն

- ✓ ճանաչի նկարչական նյութերը և կիրառի դրանք
- ✓ ճիշտ բռնի և օգտագործի մատիտ, յուղամատիտ, վրձին,
- ✓ նկարի՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը,
- ✓ նկարի օղակներ, գծեր,
- ✓ իմանա հիմնական գույները,
- ✓ պահպանի ճիշտ կեցվածք նկարելու ընթացքում,
- ✓ խնամքով օգտագործի նկարչական նյութերը:

### Ծեփակերտում

- ✓ ճանաչի ծեփվող նյութերը,
- ✓ ծեփակերտի ծավալային մի քանի մարմին՝ գունդ, ձեռքի շրջանաձև շարժումներով, գլան՝ ձեռքի ավերի հետ-առաջ շարժումներով,
- ✓ ավերով տափակեցնի ծեփանյութը,
- ✓ ծավալային որոշ մարմիններից տափակեցման միջոցով ստանա երկրաչափական պատկեր՝ գնդից ստանա շրջան,
- ✓ միացնելով գլանի եզրերը՝ ստանա օղակ,
- ✓ ծեփակերտի պարզ առարկաներ,
- ✓ ծեփանյութից առանձնացնի մանր մասեր:

### Կառուցողական աշխատանք /ապլիկացիա/

- ✓ տարբերի և անվանի կառուցողական հիմնական նյութերը,
- ✓ ըստ նմուշի կառուցի պարզ շինություն մեծահասակի օգնությամբ
- ✓ կիրառի իր կառուցած շինությունները խաղի մեջ,
- ✓ կառուցի պարզ շինություններ՝ ուղղահայաց և հորիզոնական դիրքերով,
- ✓ ճիշտ օգտվի սոսնձից,
- ✓ նախապես կտրատված պատկերները փակցնի թղթի վրա,
- ✓ տարբերի և ճիշտ ընտրի գույները:

Գործունեության ձևեր՝ խաղային, ուսումնական, աշխատանքային.

- ✚ Խաղեր.
- ✚ Խաղ-պարապմունքներ.
- ✚ Աշխատանք կենտրոններում.
- ✚ Չբոսանք.
- ✚ Ինքնուրույն գործունեություն:

Կապը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հետ՝  
Շ (ե), ԽՅ (ա), Ի (ա),(բ), (գ),(ե), ՅՍԱ (բ), (ե) (գ), ԻԱԱ -(ա),( բ), (գ)

## ՉԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋՎԱՅՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՁՆԵՐԸ

Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպումը պայմանավորված է զարգացնող-առարկայական միջավայրի առկայությամբ: Կրտսեր առաջին խմբի (2-3 տարեկանների) կրթական հիմնական ծրագրի լիարժեք իրականացման և ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է պահպանել զարգացնող միջավայրին ներկայացվող հետևյալ պահանջները՝

1. խմբասենյակում ապահովել խաղային պարագաների առկայություն՝ սաների ճանաչողական զարգացման համար՝ խճանկար, բուրգ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, բազմագույն խորանարդիկներ, գնդակներ, փոքրիկ մեքենաներ, գրքեր՝ գունեղ նկարներով,

2. սաների առարկայական գործունեության համար ապահովել նյութեր. տիկնիկներ, տարբեր չափերի կենդանիներ, տիկնիկների հագուստ, խաղալիք կահույք, տարբեր ձևերի և գույների կառուցողական նյութեր, խաղալիք-հեռախոսներ, խորանարդիկներ, փայտիկներ և այլն,

3. սաների երաժշտական ունակությունների զարգացման համար խաղային համապատասխան պարագաների առկայություն,

4. սաների կերպարվեստային գործունեության համար ալբոմների, թղթերի, վրձիկների, մատիտների, ֆլումաստերների, պլաստիլինի առկայություն (բոլոր նյութերը հասու և մատչելի պետք է լինեն սաներին՝ աշխատելու համար. մատիտները սրված, ֆլումաստերները՝ թարմ, վրձիկները՝ մաքուր),

5. զբոսանքների ժամանակ խաղալու համար փոքրիկ դուլլերի, կաղապարների, բահերի առկայություն,

6. քայլքի և այլ շարժումների համար ունենալ համապատասխան սարքավորումներ:

7. տարածքում ունենալ սաների համատեղ խաղերի համար առանձնացված հատված՝ գունեղ նկարներով, ծաղիկներով, բույսերով,

8. խմբասենյակում դիդակտիկ նյութերի առկայություն՝ սաների զգայարանների, մանր մկանների համակարգի և սյուժետային խաղերի զարգացման համար,

9. անհրաժեշտ պայմաններ շարժողական ոլորտի զարգացման առանձնահատկություններ ունեցող սաների համար. հարմարեցված աթոռ սեղանով,

կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, 2020թ.
2. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ, ՀՀ կառավարության 13 մայիսի 2021թ. N 744-Ն որոշում
3. Ավետիսյան Ժ. - Կերպարվեստ (2-3 տարեկան) Երևան, 2020թ.
4. Մարուբյան Ս., Դավաթյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն Երևան, 2008թ.
5. Միտոյան Հ., Սմբատյան Լ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2010թ.
6. Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան, 2020թ.
7. Միտոյան Հ., Ս. Մարության և ուրիշներ Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի կրթական համալիր ծրագիր, Երևան, 2012թ.
8. Սուկոյան Հ. Երեխայի գեղարվեստական դաստիարակության ժամանակակից և տեղեկատվական տեխնոլոգիաներ, Երևան 2016թ.
9. Общеобразовательная программа дошкольного образования от рождения до школы Москва 2010г.
10. Инновационная программа от рождения до школы-Н.Веракса и другие-2019г.
11. Веракса Н.Е., Веракса А.Н. Познавательное развитие в дошкольном детстве: Учебное пособие. — М., 2012.
12. Божович Л. И. Личность и ее формирование в детском возрасте—Санкт-Петербург: Питер, 2009. — 400 с
13. Борисенко М. Г., Н. А. Лукина 'В помощь маленькому мыслителю (развития элементарных математических представлений от 0 до 3 лет) Санкт-Петербург 2003г.
14. Васильева М. А. Программа воспитания и обучения в детском саду -Москва 2005г.
15. Венгер Л. А. Готов ли ребенок к школе, М.: Знание, 1994. — 192 с.
16. Гербова В. В. Развитие речи разновозрастной группе детского сада Москва 2010г.
17. Гербова В. В. Развитие речи в детском саду, Москва 2010г.
18. Из детства -в отрочество. Программа для родителей и воспитателей М. 2011г.
19. Лифц Е. А. Лифц И. В. Развитие речи, движения и мелкой моторики Мосва 2010г.
20. Микляева Н. В. Диагностика языковой способности у детей дошкольного возраста, Москва 2007г.

- 21.Обухова, Л. Ф. Возрастная психология: учебник для бакалавров / Л. Ф. Обухова. — Москва, 1999. — 442 с.
- 22.Павлова Л. Н. 'Развивающие игры-занятия с детьми от рождения до трех лет', М 2005.
- 23.Пилюгина. Э. Г. 'Воспитание и обучение детей в первой младшей группе детского сада, М. 2006.
- 24.Янушко Е. Е. Помогите малышу заговорить, Москва 2011г.»: